սուգ էին անում, դնացողների (մեռնողների) ցաւը մնացողներինը համարելով» (Ա. 11):

Աւելի մանրամասն է եւ յուզիչ Փառանձեմ տիկնոջ սուգը իր երիտասարդ ու սիրասուն ամուսին Գնէլի համար, որին սպաննել էր տուել իր հօրեղբայր Արշակ Թագաւորը, տուփալով Փառանձեմին եւ անսալով իր միւս եղբօրորդի Տիրիթի քսութեանց (Դ. 15): Արշակ մի առ ժամ ծածկում է իր յետին միտքը Փառանձեմի հանդէպ, հրաման է արձակում, որ ամէնքը ներկայ լինեն Գնէլի թաղման: «Բանակում եղած բոլոր մարդիկ, մեծ թէ փոքր առհասարակ՝ ո՛չ ոք չհամարձակի չերթալ: Ամէնքը անխտիր պարտաւոր են գալ եւ սուգ ու կոծ անել, լալ ու ողբալ Արշակունի Սեպուհ՝ սպաննուած Գնէլի համար»: Պատմիչը շարունակում է անմիջապէս: «Թագաւորը ի՛նքը եւս գնաց (խառնուեցաւ) լացողների մէջ, նստաւ եւ սգաց իր եղբօրորդի Գնէլին, որին ի՛նքը սպաննել էր: Գնաց նստաւ դիակի մօտ, լացաւ եւ հրաման տուաւ (միւնոյն ժամանակ), որ սպաննուածի դիակի շուրջը մեծ կոծ եւ սուգ կատարեն: Սպանեալի կինը, Փառանձեմ, պատառ-պատառ անելով հանդերձները, ծամերը արձակելով եւ կուրծքը մերկացնելով՝ ողբակոծ էր անում սուգի մէջ: Ձայնը բարձրացնելով ճչում էր եւ ողբ ու արտասուքի մէջ ընկղմուած, իր աղիողորմ սուգով՝ անխտիր բոլորին լացացնում էր»:

Դեռ Փառանձեմի սուգը չվերջացած, շարունակում է Փաւստոս (այսինքն՝ հայ-պատմական զեղեցիկ զրոյցը), դեռ անմխիթար տիկինը իր սիրած ամուսնու դիակի առջեւ կեցած, մի կողմից Արշակ Թագաւորը «տուփէր եւ ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան», իսկ միւս կողմից՝ «Տիրիթն սկսանէր, ժոյժ չունելոյ տուփանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն (եւ) ասէ՝ «Մի՛ կարի զանձն քո աշխատառներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա: Ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան»:

Փառանձեմի ողբերգութիւնը աւելի եւս խորանում է եւ անյոյս դառնում: «Մինչ սգողները դիակի շուրջը բոլորած՝ չտեսնուած վշտով կոծ էին անում, ահա այդպիսի առաջարկ ուղարկեց Տիրիթ: Ուստի եւ բողոք բարձրացրեց (Փառանձեմ) եւ կանչեց.

«Լսեցէ՛ք ամէնքդ. իմ մարդուս մահը՝ իմ պատճառով եղաւ. նա որ աչք էր դրել վրաս, նա՛ է սպաննել տուել ամուսինս»: Ու փետում էր մազերը, ճիչ արձակում, կոծում միեւնոյն ժամանակ»:

Փառանձեմի սուգը իր ամուսնու դիակի շուրջը՝ աւելի եւս սրտաճմլիկ կերպարանք է առնում: «Երբ այդ անսովոր բանը ամէնքի ականջն է հասնում որոշապէս», շարունակում է պատմական զրոյցը Փաւստոսի դրչի տակ, «երբ այդ բանը լսում են բոլոր սգաւորները «ձայնարկունքն»), այն ժամանակ՝ Փառանձեմ եղերամայր (մայր ողբոցն») է դառնում, սգաւորներն ամէնքը մէկ սկսում են ողբաձայն նուագել Տիրիթի տուփանքի պատմութիւնը, նրա աչք դնելը, քսութիւնը, սպանութեան հնարներ նիւթելը: Ամէնքը միասին՝ զեղգեղեալ խանդաղատութեամբ եւ մրմունջի ձայներով, ողբ ու կոծով պատմում են սպանութեան դէպքը: Երբ նոցա ձայները մարում են, պատահած դէպքը յայտնի է դառնում ամէնքին: Իսկ Արշակ Թագաւորը լսելով եւ վերահասու լինելով իրողութեան, զարմանում է, շատ զարմանում այդ բանի վրայ եւ սարսափում: Զղջում է կատարուածի համար, իր հոգու մէջ: Խօսել է սկսում Թագաւորը, իր իսկ գործած բանի համար զղջում եւ մի ափով միւսին զարնելով ասում.

«Որովհետեւ Տիրիթը անարժան սէր տածեց դէպի Գնէլի կինը, այդ իսկ պատճառով՝ նորա դէմ չարիք եւ քսութիւն նիւթեց, զուր եւ տարապարտ մահուան ոխ ու թշնամութիւն: Եւ այդպէս, նա մեզ եւս շաղախեց արդար արեան մէջ, իր պղծութեան պատճառով: Նա սպաննել տուաւ իր եղբօրը եւ միեւնոյն ժամանակ ժառանգութիւն թողեց մեզ մի այնպիսի անհնարին չարիք եւ անէծք, որ երբեք վերանալ չի կարող»:

Անէծքը իսկապէս որ չի վերանում արքայի վրայից, Տիրիթին սպաննել տալուց յետոյ եւս:

Հեթանոսական ուրիշ սովորութիւններ եւս յիշատակում է Փաւստոս: Արդէն ի՛նքն է ասում (Գ., 3).

«Դեռ մինչեւ այն ժամանակները՝ շատերը